

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### **ԱՄԵՆ. Տ. ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՅՅԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ**

Զորեքշաբթի, 11 Դեկտեմբեր, 2019-ին, ի պատիւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր, Ամերիկայի Միացեալ Նահանգաց Արեւմտեան Թեմի «Համբար» ընտանիքին անունը կրող սրահին մէջ թեմակալ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի կողմէ կազմակերպուած էր գեղեցիկ ընդունելութիւն մը, որուն ներկայ էին աւելի քան 100 հիւրեր:

Երեկոյի ընթացինք, ի ներկայութեան թեմակալ առաջնորդներու, հոգեւորականներու եւ բարերարներու Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան բարի գալուստ մաղթեց Պատրիարք Սրբազան Հօրը, ապա իր խօսքին մէջ անդրադարձաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հսկայական հոգեւոր դերին, որ իւրաքանչիւր հայ կը զգայ իր կեանքին մէջ: Սրբազան Հայրը անդրադարձաւ նաեւ Արեւմտեան Թեմի եւ Պատրիարքարանիս միջեւ եղած ջերմ յարաբերութիւններուն, որոնք տարիներ շարունակ աւելի ամրապնդուած են շնորհիւ Արեւմտեան Թեմի տարբեր ծովսերէն դէպի Սուրբ Երկիր կատարած ուխտագնացութիւններու:

Իր կարգին, Պատրիարք Սրբազան Հայրը նախ երախտագիտութիւն յայտնեց Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ջերմ եւ սրտացալ ընդունելութեան համար, ինչպէս նաեւ Պրն. Կանիմեանին, Օհան Ղարիպեանին, Շահէ Պոյաճեանին, Մաշտոց Զօպանեանին եւ Կարինէ Մերկերեանին, որոնք նեցուկ կանգնեցան եւ իրականացուցին գոյութիւնը Սրբոց Յակոբեանց Ասպետներու շարժումին: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը յանուն Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութեան, զարդարեց կուրծքը ազնուական հայորդիի մը, Տիար Յարութիւն Այվազեանին, Ս. Յակոբի Ասպետներու Առաջին Կարգի Շքանշանով, որ անցեալ Ծննդեան տօնին, Երուսաղէմ իր առաջին այցելութեան իսկ ըրած էր ինքնաբոլիս իշխանական իր նուիրատուութիւնը:

Պրն. Յարութիւն Այվազեան արժանի է բոլորիս անվերապահ գնահատանքին, որուն անունը պիտի յաւերժ մնայ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սրբտեղեաց պատմութեան մէջ:

Թող Տէր Աստուած անփորձ պահէ ու պահպանէ Այվազեան ընտանիքն ու իր պարագաները:

«Երանի՛ անոնց որ յիշատակ ունին ի Սիոն»: